Արձանագրություն №4 /Протокол №4/

գնահատող հանձնաժողովի նիստի / заседание оценочной комиссии/

| 1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման, նիստի անցկացման մասին<br>**Данные о заказчике, процедуре (коде), приобретении товаров, работ, услугах, проведении заседания** | |
|---|---|
| Պատվիրատու / Заказчик | *«ՀԱԷԿ» ՓԲԸ / ЗАО «ААЭК»* |
| Գտնվելու վայրը / Адрес | *ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր / РА, Армавирский марз, г. Мецамор* |
| Ընթացակարգի ծածկագիրը / Код процедуры | *ՀԱԷԿ-ԵՄԾՁԲ-1/24 / HAEK-EMTsDzB-1/24* |
| Մատուցվող ծառայության անվանումը Название предоставляемой услуги | ***ՀԱԷԿ-ի համակայանային կապի ավտոմատ հեռախոսակայանի արդիականացում և օպերատիվ կապի համակարգի սարքավորումների փոխարինում***<br>*Модернизация автоматической телефонной станции общестанционной связи ААЭС и замена оборудования системы оперативной связи* |
| Նիստի անցկացման վայրը Место проведения заседания | *«ՀԱԷԿ» ՓԲԸ, վարչական շենք /ЗАО «ААЭК», административный корпус* |
| Նիստի անցկացման օրը և ժամը / Дата и время поведения заседания | *22 - 26.07.2024թ. ժամը 14:00 / 22 - 26.07.2024г., 14:00ч.* |
| Նիստի անցկացման նպատակը / Цель проведения заседания | *Կասեցված նիստի վերսկսում, հայտերի գնահատում և ամփոփում /*<br>*Возобновление приостановленного заседания, оценка и подведение итогов заявок* |

| 2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին<br>**Данные о составе, участниках комиссии или уполномоченных ими представителей, присутствовавших на заседании** | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ Председатель комиссии | *ԴՏՂՄԾ պետ Գ.Հակոբյան / Начальник ССДТУ Г.Акопян* |
| Հանձնաժողովի անդամներ Члены комиссии | *ԴՏՂՄԾ պետի տեղակալ Է.Կարապետյան*<br>*Заместитель начальника ССДТУ Э.Карапетян* |
| | *ԴՏՂՄԾ առաջատար ճարտարագետ Ա.Մանուչարյան*<br>*Ведущий инженер ССДТУ А.Манучарян* |
| | *ԱՏԲ պետ Ա.Մկրտչյան*<br>*Начальник ПТО А.Мкртчян* |
| | *ԳԲ առաջատար ճարտարագետ Մ.Հակոբյան*<br>*Ведущий инженер ОЗ М.Акобян* |
| Քարտուղար / Секретарь | *ԳԸԲ 1-ին կարգի մասնագետ Մ. Մանավձյան*<br>*Специалист 1-ой категории ОЗП М.Манавджян* |
| Այլ տեղեկություններ/ Другая информация | |

**3. Տվյալներ ներկայացրած հայտերի՝ գնման ընթացակարգի հայտարարությամբ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների մասին**

**Данные о соответствии представленных заявок с условиями, установленными объявлением закупочной процедуры и решения, принятые оценочной комиссией**

*Կասեցված նիստի վերսկսման ընթացքում համակարգող քարտուղարը գնահատող հանձնաժողովին ներկայացրեց մասնակիցներ՝ **«Ռեդինետ» ՓԲԸ**-ի և **«Իքս-Արթ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված փաստաթղթերը:*

***«Ռեդինետ» ՓԲԸ**-ի կողմից ներկայացրած շփկված նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N1) և որակորման չափանիշներին համապատասխանության հայտարարությունը (Հավելված N2) լրացված են համապատասխան նախաորակավորման հայտարարության պահանջներին:*

***1-ին չափաբաժնի** համար նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված որակավորման չափանիշների գնահատման նպատակով (ԱՀԿ-ների նախագծման, տեղադրման, կարգաբերման փորձ) ներկայացվել է «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի հետ կնքված ազգային դիսպեչերական կենտրոնի և նոր պահեստային դիսպեչերական կենտրոնի նախագծման և կառուցման պայմանագիրը և հիմնավորումներ այդ պայմանագրի կատարման վերաբերյալ:*

***2-րդ չափաբաժնի** համար նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված որակավորման չափանիշների գնահատման նպատակով (ատոմակայաններում նմանատիպ համակարգերի նախագծման, մոնտաժման, կարգաբերման փորձ) ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագրով՝ կոնսորցիումի գործընկեր «Տելե-Կոմպլեքս» ՍՊԸ-ի և «Խմելնիցկայա» ԱԷԿ-ի հետ կնքված կապի օպերատիվ համակարգի մատակարարման և փոխարինման աշխատանքների պայմանագիրը, «Ռովենսկայա» և «Հարավ-Ուկրաինական»*

ԱՀԿ-ների հետ կնքված տելեկոմունիկացիոն նախագծերի մատակարարման, մոնտաժման և կարգաբերման աշխատանքների կատարման պայմանագրերը:

***«Իքս-Արթ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի*** համար նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված որակավորման չափանիշների գնահատման նպատակով (ԱՀԿ-ների նախագծման, տեղադրման, կարգաբերման փորձ) ներկայացվել է հիմնավորումներ «Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ կնքված կապալային աշխատանքների պայմանագրի կատարման վերաբերյալ և գրություն-հավաստում «Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ից «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից իրականացված ձեռք բերվող համակարգի նախագծման, ապրանքների մատակարարման, շինմոնտաժման և թողարկակարգաբերման աշխատանքների կատարման վերաբերյալ: Ներկայացրել է նաև «Տերյան 5» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման պայմանագրի կատարման վերաբերյալ հիմնավորումները և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման պայմանագրի տեխնիկական բնութագիրը:

Գնահատող հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը արձանագրեց, որ

***«Ռեդինետ» ՓԲԸ***-ի կողմից որակավորման չափանիշների գնահատման համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ***1-ին չափաբաժնի*** համար նախավորակավորման հայտարարությամբ սահմանված պահանջներին, սակայն ***2-րդ չափաբաժնի*** որակավորման չափանիշների գնահատման համար ներկայացված փաստաթղթերում առկա է ատոմակայաններում նմանատիպ համակարգերի մոնտաժման, կարգաբերման փորձը, սակայն առկա չէ ատոմակայաններում նմանատիպ համակարգերի նախագծման փորձը:

***«Իքս-Արթ» ՍՊԸ***-ի կողմից ***1-ին չափաբաժնի*** որակավորման չափանիշների գնահատման համար ներկայացված փաստաթղթերից միայն «Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ կնքված կապալային աշխատանքների պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթում առկա է ԱՀԿ-ների նախագծման, տեղադրման և կարգաբերման փորձը:

***Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ փաստաթղթերի գնահատման արդյունքում՝***

***1-ին չափաբաժնի մասով «Ռեդինետ» ՓԲԸ-ի, «Իքս-Արթ» ՍՊԸ-ի և «Արման» ՍՊԸ-ի նախաորակավորման ընթացակարգի մասնակցության հայտերը գնահատել բավարար և այս ընկերություններին ընդգրկել նախավորակավորված մասնակիցների ցուցակում:***

***2-րդ չափաբաժնի մասով հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետը նախաորակավորման ընթացակարգը հայտարարել չկայացած:***

*Սույնով երկփուլ մրցույթի նախաորակավորման ընթացակարգի նախաորակավորված վերը նշված մասնակիցները տեղեկացվում են, որ երեք աշխատանքային օրվա ընթացքում իրենց դիտարկմանը կներկայացվի երկփուլ մրցույթի առաջին փուլի հրավերը:*

*В ходе возобновления приостановленного заседания секретарь оценочной комиссии представил документы, представленные участниками **ЗАО «Рединет»** и **ООО «Икс-Арт»**.*

***ЗАО «Рединет»:*** *поданная заявка на участие в исправленной предквалификационной процедуре (приложение N1) и заявление о соответствии критериям квалификации (приложение N2) заполнены в соответствии с требованиями объявлении предквалификационной процедуры.*

*Для целей оценки квалификационных критериев, предусмотренных предквалификационным объявлением **по лоту № 1** (опыт проектирования, монтажа, наладки АТС) представил договором на проектирование и строительство национального диспетчерского центра и нового складского диспетчерского центра подписанной с ЗАО «ОЭЭС» и представлены обоснования исполнения настоящего договора.*

*Для оценки квалификационных критериев, предусмотренных в предквалификационном объявления **по лоту № 2** (опыт проектирования, монтажа, наладки аналогичных систем на атомных электростанциях), представил заключенный договор партнера-консорциума со стороны ООО «Теле-Комплекс» с «Хмельницкой АЭС» на поставку и замену системы оперативной связи и договоры на поставку, монтажа и пуско-наладочных работ телекоммуникационных объектов заключенные с «Ровенской» и «Южно-Украинской» АЭС.*

***ООО «Икс-Арт»:*** *Для оценки квалификационных критериев, предусмотренных в предквалификационном объявления **по лоту № 1** (опыт проектирования, монтажа, наладки АТС), представил обоснования выполнения договора на подрядные работы, заключенные с ЗАО «Гостиничным комплексом Армения», и письмо-подтверждение от ЗАО «Гостиничного комплекса Армения» о проектировании, поставке, монтаже и установке приобретаемой системы, осуществляемой ООО «Икс-Арт». А также представил обоснования исполнения договора поставки товаров, заключенного с ООО «Терьян 5» и технические характеристики договора поставки товаров с ЗАО «Вычислительный центр».*

*Оценочная комиссия, детально изучив представленные участниками документы, зафиксировала, что: документы представленные со стороны **ЗАО «Рединет»** для оценки квалификационных критериев **по лоту № 1**,*

| |
|---|
| *соответствуют требованиям, определенные предквалификационной объявлением, однако в документах, представленных для оценки квалификационных критериев **по лоту № 2**, имеется опыт установки и наладки аналогичных систем на АЭС, но нет опыта проектирования аналогичных систем на АЭС.*<br>*Из документов, представленных **ООО «Икс-Арт»** для оценки квалификационных критериев **по лоту № 1**, только в документе, представленном в отношении выполнения договора на подрядные работы заключенного с ЗАО «Гостиничным комплексом Армения», имеется опыт проектирования, монтажа, наладки АТС.*<br>***Основываясь на вышеизложенном, в результате оценки документов оценочная комиссия решила:***<br>***заявки ЗАО «Рединет», ООО «Икс-Арт» и ООО «Арман» по лоту № 1 на участие в предквалификационной процедуре были оценены как удовлетворительно и данные компании были включены в список предквалифицированных участников;***<br>***По лоту № 2, принимая за основу пункт 3 части 8 статьи 24 Закона РА «О закупках», объявить предквалификационную процедуру несостоявшейся.***<br>*Настоящим, вышеуказанные предквалифицированные участники предквалификационной процедуры двухэтапного конкурса, уведомляются о том, что приглашение первого этапа двухэтапного конкурса будет представлено на рассмотрение в течение трех рабочих дней.* |
| **Ընդունվեց որոշում՝ կողմ - 5 , դեմ - 0 :**<br>Принято решение: За - 5, против - 0: |

**4. Տեղեկություններ հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին**
**Сведения о месте, дне и времени следующего заседания комиссии**

| | |
|---|---|
| **Նիստի անցկացման նպատակը**<br>**Цель проведения заседания** | *Երկու փուլով մրցույթի առաջին փուլի հայտարարության և հրավերի տեքստերի հաստատում / Утверждение объявлений и текстов приглашений для первого этапа двухэтапного конкурса* |
| **Նիստի անցկացման օրը և ժամը**<br>**Час и день проведения заседания** | *31.07.2024թ. ժամը 14:00 / 31.07.2024г, 14:00ч.* |
| **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը**<br>**Место проведения следующего заседания комиссии** | *ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական մասնաշենք / г. Мецамор, ЗАО «ААЭК», административный корпус* |
| **Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0**<br>Принято решение: за – 5, против - 0 | |

| | |
|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝**<br>**Председатель комиссии** | **Գ. Հակոբյան / Г. Акопян** |
| **Հանձնաժողովի անդամներ՝**<br>**Члены комиссии** | **Է. Կարապետյան / Э. Карапетян** |
| | **Ա. Մանուչարյան / А. Манучарян** |
| | **Ա. Մկրտչյան / А. Мкртчян** |
| | **Մ. Հակոբյան / М. Акобян** |
| **Համակարգող-քարտուղար՝**<br>**Координирующий секретарь** | **Մ. Մանավջյան / М. Манавджян** |